ԱՂՎԵՆԻ ՍԱՀՄԱՆԱԴԻՐ ԺՈՂՈՎԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ԱՂԵՐՍԸ ՆԱԽՈՐԴ ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԺՈՂՈՎՆԵՐԻ ԿԱՆՈՆՆԵՐԻ ՀԵՏ *

ՀՏԴ 34 (091) *DOI: 10.52063/25792652-2025.2.25-42*

ՎՈԼՈԴՅԱ ՀՈՎՍԵՓՅԱՆ
Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի փիլիսոփայության, սոցիոլոգիայի և իրավունքի ինստիտուտի հայցորդ, ք. Երևան, Հայաստանի Հանրապետություն
Vladimirhovsepyan1953@mail.ru
ORCID: 0009-0007-9249-048X

Սույն հոդվածի նպատակն է ցույց տալ, որ պատմական Մեծ Հայքի թագավորության Արևելից կողմանց միջնադարյան վարչաքաղաքական կացության ուսումնասիրությունը ոչ միայն գիտական, այլև քաղաքական նշանակություն ունի, քանզի Ադրբեջանի պատմագրությունը քաղաքական նկատառումներով նենգափոխում է հայ ժողովրդի պատմությունը՝ կասկածի տակ դնելով հայկական պետականությունն անգամ: Եվ դա այն դեպքում, երբ մեր օրերում Ադրբեջանի ղեկավարությունը ոչ միայն Արցախի, այլև Հայաստանի Հանրապետության տարածքը լկտիությամբ ադրբեջանական է համարում: Ուսումնասիրության խնդիրներից են՝

1. ***նոր հիմնավորումներով ճշգրտել Աղվանից թագավորության վերացման, մարզպանության ստեղծման, Հայաստանից պոկված Արցախ և Ուտիք գավառների՝ Աղվանքին միացման ժամանակի հետ կապված հարցերը,***
2. ***Հայոց Արևելից կողմանց վարչաքաղաքական կարգավիճակն Աղվանից մարզպանության կազմում,***
3. ***Աղվանից մարզպանության վերացումից հետո ձևավորված տեղական հայկական իշխանական տների կացությունը IX-XIII դարերում:***

Աշխատանքի ընթացքում կիրառվել են մի շարք հատուկ մեթոդներ, մասնավորապես՝ կառուցվածքային, պատմա-իրավական, համակարգային, վերլուծական և այլն:

Աշխատանքում հիմնավորել ենք, որ Մեծ Հայքի թագավորության վերացումից հետո, նրա արևելյան նահանգները՝ Արցախն ու Ուտիքը, հայտնվելով մեկ այլ վարչաքաղաքական միավորի՝ Աղվանքի կազմում, մնացին զուտ հայկական, ինչը հիմք հանդիսացավ հայկական պետականության հետագա շարունակականության՝ Համամ Արևելցու թագավորության, Փառիսոսի և Խաչենի իշխանությունների, Խամսայի մելիքությունների, Լեռնային Ղարաբաղի ինքնավար մարզի, 1991-2023 թվականներին՝ Լեռնային Ղարաբաղի (Արցախի) Հանրապետության ձևերով:

Հիմնաբառեր՝ *Աղվեն, Արցախ, Ուտիք, Հայոց Արևելից կողմանք, եկեղեցական իրավունք, կանոնական իրավունք, սահմանադրություն, Վաչագան արքա, իրավահայտ աղբյուր, Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոններ:*

---

* Հոդվածը ներկայացվել է 04.07.2025թ., գրախոսվել՝ 11.08.2025թ., տպագրության ընդունվել՝ 30.09.2025թ.:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Հայոց եկեղեցական ժողովները որքան պատմական, նույնքան էլ իրավական արժեք ունեն: Այդ առումով դրանք բաժանվում են երկու մեծ խմբի՝ կանոնադիր և ոչ կանոնադիր: Առաջինում ընդունված կանոնները ձևավորել են կանոնական կամ եկեղեցական իրավունքը, որի հիման վրա կազմվել են կանոնական ժողովածուներ («Կանոնագիրք Հայոց»): Կանոնները եղել են պարտադիր և կիրառվել են ինչպես եկեղեցու, այնպես էլ՝ պետության անունից:

Պատմական փաստերը վկայում են, որ հայ եկեղեցական առաջին կանոնադիր ժողովը տեղի է ունեցել Աշտիշատում (365), երկրորդը՝ Շահապիվանում (444), իսկ երրորդը՝ Հայոց Արևելից կողմանց Աղվեն ամառանոցում (488):

Մեր հին մատենագիրների աշխատություններում պատմական Անդրկուրյան Հայքի, Արցախ և Ուտիք նահանգների տարածքները կոչվել են նաև «Հայոց Արևելից կողմանք», «Կողմանք Արևելից», «Աղվանից կողմանք», «Աղվանից աշխարհ» (Ասատուր Մնացականյան, Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը, 5, 84, 86), ինչպես նաև «Խորին աշխարհ հայոց» (Մաթեոս Ուռհայեցի 230) անվանումներով: Բոլոր այդ եզրույթների տակ ընկած է Մեծ Հայքի արևելյան կողմ հասկացությունը:

V դարի 2-րդ կեսին պարսիկների դեմ մղված պայքարի արդյունքում կնքված Նվարսակի հաշտության պայմանագրով (484) հայերը ստացան վարչաքաղաքական ինքնուրույնություն և հավատի լիակատար ազատություն: Այդ պայմանագիրը մի բարենպաստ վիճակ էր Հայոց Արևելից կողմանց համար, որից օգտվելով՝ տեղի բնիկ, հայկազուն Առանշահիկ տոհմից Վաչագանը հռչակվեց թագավոր, իսկ պարսից շահը, հաշվի առնելով կատարված իրողությունը, արտոնություններ տվեց Վաչագանին, այդ թվում՝ աղվանական ցեղերին կառավարելու համար:

Միևնույն ժամանակ, քսան տարվա անիշխանությունն իր խոր հետքն էր թողել հայ Աղվանքի վրա: Երկրամասում գործում էին պարսկական օրենքները, տրոհվել էին նախկին նախարարական տները, թուլացել էր հայ առաքելական եկեղեցին՝ զիջելով դիրքերը մազդեականության կրոնին և տարբեր աղանդների: Վաչագան արքան, քաջ հասկանալով, որ տեղական ազգային իշխանություն ստեղծելու համար անհրաժեշտ է կարգավորել ոչ միայն եկեղեցին, այլև ներքին հասարակական հարաբերությունները, անխնա պայքար է մղում երկրի համար վտանգավոր աղանդների դեմ, տարվա օրերի թվով եկեղեցիներ կառուցում, զարկ տալիս դպրության գործին: Թագավորը կարողացավ շատ կարճ ժամկետում առաջ մղել երկրի մտավոր և մշակութային զարգացումը, և այդ հարցերում թագավորն անձամբ օրինակ էր ծառայում: Բայց դա դեռ բավական չէր: Վաչագան արքան շատ լավ էր հասկանում, որ երկրի պետականության ամուր հիմքեր ստեղծելու և հասարակության բոլոր խավերի միջև երկարատև և կայուն անդորր հաստատելու համար անհրաժեշտ է ունենալ անսասան և տեղական առանձնահատկություններին ու ժամանակի բարքերին մոտ օրենքներ:

Այդ խոշոր գործիչը, իրեն հուզող հարցերի ճիշտ պատասխաններն ստանալու նպատակով, բազմաթիվ հարցումներով դիմել է հայոց աշխարհի հեղինակավոր գիտնականներին՝ Մատթե քահանային, Աբրահամ Մամիկոնեից եպիսկոպոսին, Սյունիքի Պետրոս եպիսկոպոսին (Մովսես Կաղանկատվացի, Պատմություն Աղվանից աշխարհի, 62,65): Ընդ որում, հարցումները եղել են «բազմաթիվ լուրջ ու ծանրակշիռ խնդիրների մասին», իսկ պատասխանները՝ «պատշաճ ու ճիշտ լուծումով» (Ստեփանոս Օրբելյան, Սյունիքի պատմությունը, 120):

Թագավորը, իր ձեռքի տակ ունենալով բավականաչափ նյութեր, համապետական պարտադիր կանոններ ընդունելու համար իր Աղվեն ամառանոցում գումարել է մի բազմամարդ ժողով՝ մի «բազմամբոխ ատյան», որը հայ իրականության մեջ սահմանադիր ժողովի նախատիպ կարող է համարվել (Լեո, երկերի ժողովածու, հատոր 2, 154, Սուրեն Երեմյան, «Հայաստանը ըստ Աշխարահացոյցի», 34): Պատմագիտական գրականության մեջ ընդունված է Աղվենի ժողովի գումարման

տարի և ամիս համարել 488 թվականի մայիս ամիսը (Բագրատ Ուլուբաբյան, Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության, 165):

Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթին անդրադարձել են բազմաթիվ հայ և օտարազգի մասնագետներ՝ պատմաբաններ, իրավագետներ, գրականագետներ և այլն: Սակայն այդ խոշոր փաստաթղթի համապարփակ պատկերը դեռևս չի ամբողջացվել, քանզի ուսումնասիրողներն իրենց աշխատություններում անդրադարձել են Աղվենի ժողովում ընդունված փաստաթղթի այս կամ այն կողմին: Հայոց եկեղեցական իրավունքի ձեռնարկի հեղինակ Մելիք Թանգյանը Աղվենի ժողովում ընդունված իրավունքի կոթողի մասին ընդհանրապես որևէ խոսք չի ասել:

Հայ պատմիչների գործերում, հայ ազգային եկեղեցական ժողովներում, իրավունքի հայկական հուշարձաններում և հայոց լեզվի բառարաններում օգտագործվող «**սահմանադրություն**» բառի բովանդակային առումով իմաստի տակ նախկինում նկատի են ունեցել, որ դա որոշում է, վճիռ է, «օրինադրություն» է և հստակ բնութագրում է իրերի ու երևույթների որոշակի կարգ, կանոն, օրինաչափություն սահմանելու, ընդունելու հանգամանքը՝ ընդգծելով վերջինիս որոշակի, առանձնահատուկ բնույթը, որ այն ունի սահմանային նշանակություն, իրենից այն կողմ, իրենից վեր կամ գերակա «որոշում» լինել չի կարող, մի որոշում, որ տրված է «ի վերուստ» և ունի սահմանային ու գերակա բնույթ (Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ, 9-11)

«Կանոն»-ը հունական բառ է, որը նշանակում է ուղիղ փայտ, ձող, ուղիղ գիծ, սահմանագիծ: «Կանոն» բառն օգտագործվում է երաժշտության, քերականության, հոգևոր և այլ ոլորտներում: Հոգևոր իշխանության մեջ «կանոն» բառը նշանակում է եկեղեցական գրությունների, Սուրբ գրքի և ժողովների պարտադիր հրահանգներ, գրավոր հրամաններ, այսինքն՝ քրիստոնեական եկեղեցու կողմից օրենքի աստիճանի բարձրացված այն համընդհանուր դրույթները, որոնք վերաբերում են եկեղեցական կարգին, եկեղեցական կառավարմանը և յուրաքանչյուր անձի պարտականությանը: Եկեղեցու մեջ կանոնն այն է, ինչ-որ օրենքը՝ պետության մեջ: Կանոնի և օրենքի տարբերությունը հստակեցվեց հռոմեական իրավագիտության մեջ Հուստինիանոսի ժամանակաշրջանում և ընդունվեց բոլոր ազգերի կողմից: «Կանոն» եզրույթը հատկացվեց միայն եկեղեցական սահմանադրություններին՝ զուգակշիռ դնելով դրան քաղաքացիական կարգադրությունները, որոնք կոչվում էին օրենքներ (Ներսես վրդ. Մելիք Թանգյան, Հայոց եկեղեցական իրավունքը, 25,26):

Ըստ պրոֆ. Խ.Սամուելյանի՝ սկզբնական շրջանում եկեղեցական կանոնները դավաբանաթեզերի ու բարոյագիտական նորմերի հավաքածու են եղել: Այդ կանոնները սահմանվում էին ավելի հաճախ, այսպես կոչված, եկեղեցական ժողովներում, որոնք լինում էին տիեզերական և տեղական: Հայ եկեղեցական ժողովներին երբեմն մասնակից էին լինում նաև աշխարհիկ ավատատերերը, մանավանդ՝ քաղաքական ճգնաժամային պահերին: Նման պայմաններում եկեղեցին յուրացնում էր օրենսդիր և իրավադիր գործառույթներ, որոնց ուժով եկեղեցին իրեն իրավունք էր վերապահում ոչ միայն կարգավորելու եկեղեցու և հոգևոր դասի ներքին հարաբերությունները, պարտականությունները, տնտեսական գույքային հարցերը, կազմելու **սահմանադրություն,** այլև միջամտելու աշխարհիկ հասարակական հարաբերություններին ու դրանք ենթարկելու եկեղեցու իրավասությանը (Խաչիկ Սամուելյան, Հին հայ իրավունքի պատմություն, 42,43):

Բյուզանդական իրավագիտության մեջ այն աշխարհիկ և հոգևոր օրենքների հավաքածուն, որով ղեկավարվում էր եկեղեցին և եկեղեցական դատարանը, կոչվում էր «նոմոկանոն» (հունարեն՝ **նոմոս**-օրենք և **կանոն** բառերից): Ռուսները նման օրենքների հավաքածուներն անվանել են «Кормчие книги» (ղեկավար գրքեր): Անվիճելի է, որ բյուզանդական իրավագիտությունն իր հետքն է թողել նաև հայ իրավունքի վրա: Բյուզանդիայում թագավորական օրենքները կոչվում էին նաև **սահմանադրություններ**. և հիմնականում այն օրենքներն են կոչվել

սահմանադրություններ, որոնք նպաստել են երկրի քաղաքական հարաբերությունների կայունացմանը: Բյուզանդիայում թագավորական օրենքները և եկեղեցական կանոններն առաջին անգամ օրինակարգավորման են ենթարկվել 438 թվականին: Նման հավաքածուները սահմանադրության նախատիպար են հանդիսացել:

Մեր պարագայում, քննարկվող փաստաթղթի՝ Աղվանից արքա Վաչագանի «Կանոնական Սահմանադրություն» անվանումը ցուց է տալիս, որ փաստաթուղթը բոլորովին եկեղեցական կանոնների հավաքածու չէ, այլ միապետի կողմից ընդունված բարձրագույն օրենք: Իսկ այն հանգամանքը, որ Աղվենի ժողովում ընդունված փաստաթուղթը հոգևոր հարցերից բացի կարգավորել է նաև աշխարհիկ հարաբերություններ, թույլ է տալիս այն կոչել «Կանոնական Սահմանադրություն»: Միաժամանակ, մենք հեռու ենք այդ փաստաթուղթը 5-րդ դարի իրականությունից կտրելու և այն ներկայիս իմաստով **սահմանադրություն** կոչելու գայթակղությունից, չնայած մեր հոդվածում հարազատ ենք մնում «Կանոնական Սահմանադրություն» եզրույթին:

Հայ ժողովրդի լեզվով խոսող այդ փաստաթղթի նախաբանը բանալի է տալիս մեզ հասկանալու, թե ինչի համար է հրավիրվել ժողովը: Մասնավորապես՝ նախաբանում նշվում է. «Աղվանից արքա Վաչագանի տարիներին աշխարհականների ու եպիսկոպոսների, քահանաների ու քորեպիսկոպոսների, ազնվականների ու ռամիկների միջև բազմաթիվ հակասություններ էին լինում: Արքան կամեցավ մի բազմամարդ ժողով գումարել Աղվենում, որ կայացավ մարաց ամսի տասներեքին»:

Փաստաթղթի նախաբանը մեզ նաև հուշում է, որ հակասությունները եղել են կրոնական և սոցիալական բնույթի: Փաստաթղթի տեքստը սկսվում է. «Ես՝ Վաչագան Աղվանից արքաս (այնուհետև թվարկվում է հոգևոր և ազնվական անձանց անունները, որոնք միաբան արքայի ամառանոցն են ներկայացել)... որոշեցինք հետևյալը»:

Սահմանադրության նախաբանում անուններով և բնակավայրերով նշված 18 հոգևորականներից 16-ը ներկայացրել են Հայոց Արևելից կողմանքը, իսկ ընդունված փաստաթուղթն իրենց մատանիներով կնքած աշխարհականները (ազնվականները, նահապետները) եղել են Արցախից և մի հոգի՝ Ուտիքից: Փաստաթուղթն ավելի վավերական լինելու համար կնքվել է նաև Վաչագան թագավորի մատանիով:

Պատմական առումով ազնվականներն (ազատները), ավատատիրական աստիճանակարգության մեջ թագավորներից և նահապետներից հետո, խոշոր կալվածատերեր են հանդիսացել, իսկ քերականական իմաստով ազնվական բառը նշանակում է *ազնվազարմ, ազնվատոհմիկ, ազնավուր, ազնվացեղ, արիստոկրատ, նշանավոր տոհմի պատկանող* (Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան 10; Մ. Սուքիասյան, Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան, 8): Արշակունյաց Հայաստանում նախարարության գլուխ կանգնած էր տարիքով ավագագույն անդամը, որը հայ մատենագրության մեջ կոչվում էր տեր կամ տանուտեր, նախարար կամ նահապետ: Այս եզրույթները հայ պատմագիրների հուշարձաններում հաջորդում են միմյանց որպես պարզ հոմանիշ հասկացություններ, այն տարբերությամբ միայն, որ հեղինակներից մի քանիսը գերազանցապես գործածում են դրանցից մեկը, իսկ ոմանք էլ՝ մյուսները (Ադոնց, 516): Նահապետը համարվում էր ամբողջ տոհմի ներկայացուցիչ, որի ձեռքում էին տոհմային կալվածքի բովանդակ հողային իրավունքը և քաղաքական իշխանությունը նախարարական տարածքի նկատմամբ: Նահապետը թագավորից միայն վասալական կախվածության մեջ էր գտնվում:

Սխալված չենք լինի, եթե Արշակունյաց Հայաստանի ավատատիրական աստիճանակարգության բնորոշ գծերը տարածելով հայ Աղվանքի վրա՝ նշենք, որ Աղվենի ժողովում ապահովված է եղել Հայոց Արևելից կողմանց յուրաքանչյուր

վարչական միավորի հոգևոր և աշխարհիկ իշխանություն կրողների ներկայությունը:

Կանոնական Սահմանադրությունը բաղկացած է 21 կանոնից և եզրափակիչ կանոն-դրույթից: Այդ կանոնները կարելի է բաժանել 4 խմբի՝

ա) ներեկեղեցական գործերը կարգավորող (Ա, Բ, Զ, Է, Թ, ԺԵ, ԺԶ կանոններ).

բ) հոգևոր և աշխարհիկ դասի վերնախավի հարաբերությունները կարգավորող (ԺԷ, ԺԸ, Ի, ԻԱ կանոններ).

գ) հոգևոր դասի և եկեղեցու համայնքի հարաբերությունները կարգավորող (Գ, Դ, Ե, ԺԹ կանոններ).

դ) իրավական բնույթի (Ը, Ժ, ԺԱ, ԺԲ, ԺԳ, ԺԴ, ԺԵ, ԺԶ կանոններ):

Ինչպես յուրաքանչյուր նորմատիվ իրավական ակտ, այնպես էլ Աղվենի ժողովում հաստատված Վաչագան արքայի «Կանոնական Սահմանադրությունն» իր դարաշրջանի ծնունդն է, իր վրա կրում է այդ դարաշրջանի իրավագիտակցության կնիքը և, ժամանակից բխող խոշոր պատմաիրավական փաստաթուղթ հանդիսանալով, վաղ ավատատիրության դարաշրջանում (մ.թ. **V-IX** դդ.) կարգավորել է Արցախ-Ուտիքյան հայաշխարհի հասարակական հարաբերությունները:

Հին հայ իրավունքի գրավոր այդ խոշոր հուշարձանի համար իրավունքի աղբյուրներ են հանդիսացել Հին և Նոր կտակարանները, սովորութային իրավունքը, հայոց հայրապետներին վերագրվող կանոնները, իրավահայտ աղբյուրները, հոգևոր գործիչների մեկնությունները, Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովների կանոնները՝ հաշվի առնելով նաև տեղական ազգային իշխանության հասարակական, տնտեսական և քաղաքական կյանքի առանձնահատկությունները:

Այսպես՝ *Ա* կանոնը գյուղական քահանայի՝ եպիսկոպոսից հոգևոր կարգ ու կանոն սովորելու գործընթացի հիմքում դնում է «Աստվածաշունչ» մատյանը, իսկ Դ կանոնը, կարգավորելով ժողովրդի կողմից քահանային տուրքեր վճարելու կարգը, մատնանշում է Պողոս առաքյալի՝ «Նա, որ առատությամբ է սերմանում, առատությամբ էլ կինձի» խոսքերը:

Ըստ Կաղանկատվացու՝ սուրբ մանուկ Գրիգորիսի մասունքները գտնելու նպատակով՝ Վաչագան արքան «հին մատենագիրների պատմությունից տեղեկացել էր», որ Հայոց Արևելից կողմանց քահանայապետ Գրիգորիսը նահատակվել է Վատնյան դաշտում (337-Վ. Հ.), և նրա մարմինն ամփոփվել է Արցախի տարածքում գտնվող Ամարաս եկեղեցու մոտ, որ հիմնարկել է հանգուցյալի պապը՝ Գրիգոր Լուսավորիչը (Կաղանկատվացի, 48): Այս փաստը ցույց է տալիս, որ դպրության ջատագով Վաչագան արքան քաջածանոթ էր 5-րդ դարի իրավահայտ աղբյուրներին՝ պատմիչներ Ագաթանգեղոսի, Բուզանդի, Մովսես Խորենացու և այլոց աշխատություններին, որոնցում նշված իրավահայտ նյութերը հիմք են հանդիսացել մի քանի կանոնների ընդունման համար: Ամեն դեպքում, Աղվենի սահմանադիր ժողովում ընդունված կանոնների ամենագլխավոր սկզբնաղբյուրներն Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովների կանոններն են եղել, ուստի՝ ամփոփ գծերով անդրադառնանք դրանց:

Աշտիշատի եկեղեցական ժողովի կանոնները

Աշխարհի հզոր գաղափարախոսություններից մեկը՝ քրիստոնեությունը, թագավորական Հայաստանում պետական կրոն հռչակվելուց հետո հաղթական քայլեր ձեռնարկեց հին կրոնական բարքերն արմատախիլ անելու համար: Այդ նախաձեռնությունն իր ձեռքը վերցրեց հայոց քահանայապետ Ներսես Մեծը, որ ցանկանում էր հունաց աշխարհի բարեկարգությունները նաև հայերի մեջ մտցնել: Եվ ահա 365 թվականին Տարոն գավառի Աշտիշատ ավանում հրավիրվեց հայ առաքելական եկեղեցու առաջին պաշտոնական ժողովը՝ հոգևորականների և աշխարհականների մասնակցությամբ, որը դարակազմիկ նշանակություն ունեցավ Հայաստանի հոգևոր, ներքաղաքական կյանքում: Դա հայոց առաջին ազգային եկեղեցական ժողովն էր, որի մասին հավաստի տեղեկություններ ենք գտնում

պատմիչներ Բուզանդի, Խորենացու և Դրասխանակերտցու աշխատություններում (Փավստոս Բուզանդ, Հայոց պատմություն, 129; Մովսես Խորենացի, Պատմություն հայոց, 337; Հովհաննես Դրասխանակերտցի, Հայոց պատմություն, 48, 49):

Հայ իրավահայտ աղբյուրներից նկատելի է, որ ժողովում ընդունված որոշումները, դասավորված, դասակարգված, կանոնակարգված չեն եղել և գրված են ազատ շարադրանքով: Սակայն, ինչպես արդարացիորեն մատնանշել է «Հայոց եկեղեցական իրավունքը» երկի հեղինակը, «հետագա ժամանակներում դրանք վերածվել են վեց գլխի (հոդվածի)» (Մելիք Թանգյան, 313-319): Մինչդեռ Բուզանդի աշխատությունից կարելի է եզրահանգել, որ Ներսես քահանայապետը, բացի վեց կանոնից, սահմանել է նաև այլ կանոններ, սակայն դրանք չեն պահպանվել:

Աշտիշատի եկեղեցական ժողովում կանոնական սահմաններով հաստատված որոշումները հետագա դարերում խմբավորվել են հետևյալ բովանդակությամբ վերնագրերում և հաջորդականությամբ՝

1. մերձավոր ազգականների միջև ամուսնության արգելքի մասին.
2. քրիստոնեության հիմքերը խեղաթյուրող երևույթների վերացման, թաղման ժամանակ հեթանոսական ծեսերի արգելքի և գթասրտության մասին.
3. անբուժելի հիվանդների և անդամալույծների նկատմամբ հոգատարության մասին.
4. մաքսեր և տուրքեր սահմանելու մասին.
5. օտարների և հյուրերի համար հյուրանոցներ կառուցելու մասին.
6. կուսակրոն կյանք վարող հոգևորականների և ճգնավորների համար կացարաններ շինելու, ինչպես նաև հունարեն և ասորերեն լեզուներով դպրոցներ հիմնելու մասին (Ռուբեն Ավագյան, Հայ իրավական մտքի գանձարան, 99-110):

Փաստորեն Աշտիշատի ժողովի կանոնները վերաբերել են ոչ միայն կրոնական-եկեղեցական խնդիրներին, այլև աշխարհիկ կյանքին ու հասարակական-տնտեսական հարաբերություններին: Այսպես՝ մերձավոր ազգականների ամուսնությունը խորապես արմատացած էր ազնվական դասի մեջ, մանավանդ՝ նրանց կալվածատիրական իրավունքը ժառանգաբար պահպանելու նպատակով: Հենց առաջին կանոնն իր սուր ծայրով ուղղված էր մերձամուսնության դեմ՝ հորդորելով, որ ամուսնության մեջ օրինավոր լինեն, ամուսնացածներն իրար չխաբեն, իրար դեմ դավ չսարքեն, հեռու մնան ազգակցական մերձավոր խառնակ ամուսնություններից, մանավանդ՝ հարսների հետ մերձավոր ամուսնությունից և սրանց նմաններից: Ժողովը թեև արգելում էր մերձավորների ամուսնությունը, բայց դրա վերաբերյալ որոշակի աստիճաններ չէր սահմանում: Եվ եթե Խորենացու պատմության մեջ այս աշխարհիկ կանոն- խրատի հասցեատերերը «նախարարական ցեղերն» էին (Խորենացի, 337), ապա Փավստոսի երկում՝ բոլորը (Բուզանդ, 130) Իսկ դա նշանակում է, որ կանոնն ուղղված է եղել նաև թագավորին: Ինչպես մյուս կանոնները, այնպես էլ այս կանոնը պատիժ (սանկցիա) չեն սահմանել: Մեր կարծիքով, թագավորական իշխանության տարիներին հայ առաքելական եկեղեցու հեղինակությունը դեռ նոր էր սկսել բարձրանալ, պայքար էր մղվում հայերի մեջ առկա հեթանոսական հոռի բարքերն արմատախիլ անելու համար, ուստի՝ եկեղեցին դեռևս բավարար ուժ չուներ նախարարական տների վրա:

Բուզանդը, խոսելով տեր և ծառա հարաբերությունների մասին, նշում է, որ թագավորը, մեծամեծերը և, առհասարակ, իշխանություն ունեցողները պետք է որ «գութ ունենան իրենց ծառաների, ստորադրյալների և աշակերտների վրա, սիրեն նրանց իբրև իրենց հարազատների, ապօրինի կերպով ու չափազանց հարկերով նրանց չնեղեն, հիշեցնելով, որ նրանց համար էլ աստված կա երկնքում: Այսպես էլ ծառաներին էլ պատվիրում էր և հնազանդ լինել իրենց տերերին՝ հիշեցնելով նրանց, որ դրա համար վարձք կստանան Տիրոջից» (Բուզանդ, 59):

Փավստոսի և Խորենացու երկերից նկատելի է, որ Աշտիշատի ժողովը հրավիրել և նախագահությունը վարել է հայոց Ներսես կաթողիկոսը: Արշակ թագավորի ներկայության մասին մեր պատմիչները տվյալներ չեն թողել: Ամենայն հավանականությամբ, ժողովի ընդունած որոշումները չեն արտահայտել հայոց արքայի կամքը: Եվ հենց դրանով պետք է բացատրել, որ կանոնների ընդունումից մի քանի տարի հետո հայոց արքան սկսեց գործով ոտնահարել ժողովի որոշումները: Նա սպանել տվեց իր Գնել եղբորորդուն և նրա կնոջը՝ Փառանձեմին կնության առավ, իսկ հետո հունաց երկրից Ողոմպիս անունով կնոջ հետ ամուսնացավ: Թագավորի հրամանով Արշակավան քաղաքը բնակեցնելու նպատակով այնտեղ էին հավաքվել գողերը, ավազակները, պարտատերերը և այլն: Ըստ Բուզանդի՝ բոլորի բերանում ընդհանուր խոսք էր դարձել, թե «Իրավունքը մեռավ, եթե նա գոյություն ունենար, բայց կորած լիներ՝ կփնտրեինք, մի տեղ կգտնեինք նրան»: Դեռ ավելին, գահ բարձրացած Պապ թագավորը (370-374) բռնի ուժով վերացնում է հայոց կաթողիկոսի սահմանած կանոնները և աշխարհիկ հարաբերությունների կարգավորման հարցերում սահմանափակում եկեղեցու իրավունքները: Կաթողիկոսի մահից հետո նրա կառուցած հիվանդանոցները, հյուրանոցները, աղքատանոցներն ավերվում են, եկեղեցու պատիվն անարգվում, և կաթողիկոսի սահմանած շատ կարգերն ու բարեկարգությունները տապալվում ու մոռացության մատնվում: Շատ մարդիկ վերադառնում են նախկին կրոնին՝ կռապաշտությանը: Թագավորը լավ էր հասկանում, որ, չնայած երկրում քրիստոնեությունն արտաքնապես ընդունվել է, սակայն ժողովրդի մեջ դեռևս չի արմատավորվել: Նրա հրամանով յուրաքանչյուր մարդ կարող էր «համարձակորեն թողնել իր ամուրի կնոջը. կար մարդ, որ տասը կին էր փոխում. . . մեռելներին ողբում էին, փողերով, փանդիռներով ու վիներով կոծի պարեր էին բռնում. . . » (Բուզանդ, 168-174):

Աշտիշատի ժողովի կանոններով սահմանված՝ մերձամուսնության, բազմակնության և հեթանոսական հոռի երևույթների դեմ պայքարը, հոգատարությունը հիվանդների և անդամալույծների, որբերի և այրիների, օտարների և հյուրերի նկատմամբ, վկայում են, որ ժողովի կանոնները համապարտադիր բնույթ են կրել:

Աշտիշատում գումարված ժողովը Հայաստանում առաջին ազգային եկեղեցական ժողովն էր և, փաստորեն, այն պարտադիր կանոններ սահմանող ժողովների հիմքը դրեց, որն էլ իրավունքի աղբյուր հանդիսացավ հետագա մի շարք ժողովների, մասնավորապես, Շահապիվանի, Աղվենի, Դվինի և Պարտավի եկեղեցական ժողովներում հոգևոր և աշխարհիկ կանոններ ընդունելու համար:

Աշտիշատի ժողովում հոգևորականների և աշխարհականների մասնակցության սկզբունքը պարտադիր պայման հանդիսացավ հետագա դարերի բոլոր եկեղեցական ժողովների համար:

Աշտիշատի ժողովի կանոնները թեև ուսումնասիրողներին անհայտ պատճառներով հետագայում «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում չեն մտցվել, սակայն դա բնավ չի նսեմացնում առաջին ազգային եկեղեցական ժողովի նշանակությունը, որի ընդունած որոշումները պարտադիր են եղել ողջ հայ ժողովրդի համար և սկզբնաղբյուր են հանդիսանում հայ իրավունքի պատմության հետազոտման գործում:

Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոնները

Հայ առաքելական եկեղեցին, որ հենց սկզբից իրականացնում էր երկրի օրենսդրական և դատավարական գործառույթները («Մեծ դատավարության» գործակալությունը՝ հայոց կաթողիկոսի գլխավորությամբ), Պարսկաստանի կողմից Արշակունյաց Հայաստանի պետականության վերացումից և մարզպանության ստեղծումից հետո (428) գրավեց ազգային պետականության թափուր տեղը՝ առանձնահատուկ դեր ստանձնելով հայոց կանոնական իրավունքի օրինադրման

գործում: Ամեն դեպքում, այդ գործունեության չափն ու սահմանները պայմանավորված էին տվյալ պահին Հայաստանի քաղաքական կացությամբ: Եվ ահա, նման պայմաններում հայոց Հովսեփ կաթողիկոսի եւ մարզպան Վասակ Սյունու կարեւոր ձեռնարկումներից մեկը եղավ Շահապիվանի (գտնվում է պատմական Հայաստանի Հին Բայազետ բնակավայրի շրջակայքում, և այն հնուց ի վեր հայոց թագավորների բանակատեղին էր) ժողովի հրավիրումը, որը տեղի ունեցավ 444 թվականին:

Շահապիվանի ժողովը հայոց ամենափառավոր ժողովներից մեկն էր, որին մասնակցել են մարզպան Վասակ Սյունին, սպարապետ Վարդան Մամիկոնյանը, բազմաթիվ հոգևորականներ, իշխաններ, զորագլուխներ, և այլն: Ժողովում նախագահում էր հայոց կաթողիկոսը:

Շահապիվանի ժողովի կանոնները գրաբար լեզվով զետեղված են «Կանոնագիրք Հայոց» ժողովածուում և դրված են Սահակ Պարթևի կանոններից հետո (Կանոնագիրք Հայոց, հատոր Ա, 422-466): Կանոնները գրաբարից աշխարհաբար թարգմանել և մեկնաբանել է Մելիք Թանգյանը (Թանգյան, 319-356):

Ժողովում ընդունված որոշումը կազմված է ներածականից և 20 կանոնից: Ներածականից նկատելի է, որ ժողովը հաստատել է մինչ այդ եղած բոլոր տիեզերական ժողովների, առաքյալների և հայոց հայրապետների կանոնական որոշումները: Ներածականից կարելի է նաև հետևաբերել, որ կանոնների ընդունմամբ առաջին հերթին շահագրգռված են եղել ժողովին ներկա հայոց աշխարհի ավագ նախարարները, որոնք օրենքների և սրբությունների նախանձախնդիր պաշտպաններ էին և սուրբ Գրիգորի, Սահակի ու Մեսրոպի սահմանած կարգ ու կանոնը վերականգնելու մասին նրանց առաջարկություններին ժողովին ներկա հոգևորականությունը հիմնականում համաձայնվել է և, միաժամանակ, առաքելական ու նիկիական կանոններին ավելացրել այնպիսիները, որոնք անհրաժեշտ են հատկապես Թորգոմա տան (իմա՝ Հայոց երկրի) և «կողմանց արեւելայցս» համար (Կանոնագիրք Հայոց, 426): Իսկ դա նշանակում է, որ Արշակունյաց թագավորության վերացումից հետո նախարարական իրավունքը սկսել է թուլանալ և որոշ չափով ենթարկվել հայ եկեղեցական ստորակարգությանը՝ ճանաչելով նրա դատական գործունեությունն ու օրենսդրական իրավասությունը: Հիշարժան է, որ ժողովի կանոնները պարտադիր են եղել նաև երկրի արևելյան գավառների համար, ինչը նշանակում է, որ ժողովի հրավիրման ժամանակ *Արցախ* և *Ուտիք* գավառները դեռևս մարզպանական Հայաստանի կազմի մեջ էին գտնվում:

Ժողովում ընդունվել է քսան կանոն, որոնք վերաբերում են Հայաստանի ներքին կյանքի տարբեր բնագավառներին՝ ամուսնալնտանեկան հարցերի կագավորմանը (Գ, Դ, Ե, Զ, Է, ԺԲ և ԺԳ կանոնները), հոգևորականների գործունեության հսկողությանը (Ա,Բ, Թ, ԺԵ, ԺԷ, ԺԶ և ԺԸ կանոնները), մծղնեական աղանդների հետևողներին (ԺԴ, ԺԹ և Ի կանոնները) և հեթանոսական հոռի մնացուկների դեմ պայքարին (Ը, Ժ և ԺԱ կանոնները): Այս կանոններից միայն մեկը՝ ԺԵ-ն (կրոնական դարձողի մասին) խրատական բնույթ ունի և պատիժ չի նախատեսում: Մնացած կանոնները նախատեսում էին խիստ պատիժներ:

Ժողովը խիստ պատիժներ էր նախատեսում նաեւ այն քահանաների և երեցների համար, որոնք տուրք էին տվել պղծությանն ու պոռնկությանը, անօրինական ճանապարհներով պաշտոնների էին տիրացել կամ կաշառքով ձեռնադրվել, տանտիկիններ էին պահել կամ մերձավորների էին ամուսնացրել: Ի դեպ, այս ժողովում ընդունած որոշումը հայ իրականության մեջ առաջին կանոնական փաստաթուղթն է, որտեղ խոսվում է «կաշառք, կաշառարություն կամ աչառություն» (ԺԶ և Ի կանոնները) բացասական երևույթների և դրանց դեմ պայքարի անհրաժեշտության մասին, և հոգևորականների հետ պայքարողների շարքերում դասել է նաև «ազատ կամ ավագ դատավորներին»: Ամեն պարագայում, Արշակունյաց Հայաստանում երկրի գերագույն աշխարհիկ դատավորը թագավորն էր:

Ակնհայտ է, որ ժողովի կանոնախումբը, հանցագործության համար սահմանելով քրեական և քաղաքացիական պատիժներ, դրանով իսկ դուրս է գալիս կանոնական բնույթից և դատաստանագրքի նշանակություն ստանում:

Ըստ պրոֆեսոր Ս. Հովհաննիսյանի՝ Աղվենի սահմանադիր ժողովի որոշումների հիմքում դրվել են միայն Աշտիշատի ժողովի կանոնները և Ներսես կաթողիկոսի միջոցառումները՝ հաշվի առնելով Աղվանքի աշխարհիկ և հոգևոր դասերի ուժերի նոր հարաբերակցությունը և տեղական առանձնահատկությունները (Սմբատ Հովհաննիսյան, Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ, 265-274): Անվանի գիտնականը քննարկման առարկա կանոնների կապը Շահապիվանի ժողովի կանոնների հետ բացառելու նպատակով առաջ է քաշում այն խոցելի վարկածը, ըստ որի՝ Աղվենի սահմանադիր ժողովը հրավիրվել է 372/387 թթ., Վաչագան 2-րդի թագավորության և Շուփհաղիշոյի հայրապետության օրոք, ինչը համընկնում է Պապ թագավորի գահակալության վերջին տարիների հետ: Զարմանալի է, որ բոլոր հայ պատմիչները և պատմաբանները, Հայոց Արևելից կողմանքը՝ մինչև Մեծ Հայքի առաջին բաժանումը, համարել են մայր հայրենիքի անբաժան մասը, ուստի՝ այդ երկրամասը, որի առանցքն Արցախ աշխարհն էր, IV դարի 2-րդ կեսում չէր կարող վարչաքաղաքական անկախության որևէ կարգավիճակ ունենալ և սահմանադիր ժողով հրավիրել: Դեռ ավելին, դժվար չէ նկատել, որ Աղվենի ժողովին ներկա եղած հոգևոր և աշխարհիկ ներկայացուցիչները հիմնականում Արցախ և Ուտիք գավառներն էին ներկայացնում:

Ինչպես գիտենք, Աշտիշատի ժողովի կանոնները մեզ հասել են Բուզանդի և Խորենացու աշխատությունների միջոցով (Ս. Հովհաննիսյանը վկայակոչում է միայն Բուզանդին), այն էլ՝ ոչ համահավաք կերպով: Վաչագան արքան, ծանոթ լինելով նախընթաց երկու հայկական եկեղեցական ժողովների կանոններին, անկասկած, օգտվել է դրանցից: Այդ են վկայում Աշտիշատի ժողովի 1-ին և 2-րդ խմբի կանոնների որոշակի նմանությունները Աղվենի ժողովի Ժ, ԺԱ, ԺԲ և ԺԳ կանոնների հետ: Սակայն, կարգավորման առարկայի տեսակետից մի քանի նորմերի նմանությունները մեզ իրավունք չեն վերապահում Աղվենի ժողովի հրավիրումը շուրջ մեկ դար հետ տանել՝ բացառելով Շահապիվանը: Այդ այն դեպքում, երբ Շահապիվանի և Աղվենի ժողովների համեմատությունը ցույց է տալիս, որ դրանց միջև եղածը հասարակ նմանություն չէ, և ընդհանուր գծերով միմյանց միջև տարբերությունն էական չէ: Այն հանգամանքը, որ Աղվենի սահմանադիր ժողովի Ա, Ը և ԺՁ կանոնների սանկցիաներում շեշտվում են «ինչպես կարգն է», «ըստ օրենքների պատժվում», և «դատվեն կանոններով» եզրույթները, կարծում ենք, որ այդ վկայակոչվող պատիժների հիմքում ընկած են հենց Շահապիվանի կանոնները:

Աղվենի ժողովում ընդունված սահմանադիր կանոնների սերտ աղերսը Շահապիվանի եկեղեցական ժողովի կանոնների հետ մատնանշել է նաև Ն. Ակինյանը (Ներսես Ակինյան, Մովսես Դասխուրանցի, 135-140):

Եզրակացություն

Ինչպես յուրաքանչյուր իրավական ակտ, այնպես էլ Աղվենի աշխարհիկ-եկեղեցական ժողովում հաստատված կանոններն իրենց դարաշրջանի ծնունդն են. կրում են այդ դարաշրջանի իրավագիտակցության կնիքը: Այն ժամանակից բխող խոշոր պատմահրավական փաստաթուղթ է, որը վաղ ավատատիրության դարաշրջանում (մ.թ. V-IX դդ..) կարգավորել է Արցախ-Ուտիքյան հայաշխարհի քաղաքական, իրավական և հասարակական հարաբերությունները:

Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները կառուցված են Հին և Նոր կտակարանների, սովորութային իրավունքի, հայոց հայրապետներին վերագրվող կանոնների, իրավահայտ աղբյուրների, հոգևոր գործիչների մեկնությունների, Աշտիշատի և Շահապիվանի եկեղեցական ժողովների հիմքի վրա՝ հաշվի առնելով մայր հայրենիքից բաժանված Հայոց Արևելից կողմանց քաղաքական, տնտեսական և

հոգևոր կյանքի առանձնահատուկ նոր պայմանները:

Հայկական լեռնաշխարհի անբաժանելի մասը կազմող Արցախ-Ուտիքյան հայաշխարհում հայկազուն Առանշահիկ տոհմի խոշոր ներկայացուցիչ Վաչագան արքայի իշխանությունն երբեմնի հզոր Մեծ Հայքի թագավորության մի բեկորն էր հանդիսանում, որի կենտրոնն Արցախամուր աշխարհն էր, իսկ արքայի կողմից ընդունված Կանոնական Սահմանադրությունը, որը հռչակեց օրենքի գերակայության գաղափարը, երկար ժամանակ համերաշխություն, հաշտություն և անդորրություն բերեց երկրին, որի շնորհիվ հայկական կիսանկախ պետական իշխանությունը շարունակվեց հետագա դարերում:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ասատուր Մնացականյան. *Աղվանից աշխարհի գրականության հարցերի շուրջը*. Երևան, 1966:
2. Մաթեոս Ուռհայեցի. *Ժամանակագրութիւն*. Վաղարշապատ, 1898:
3. Փավստոս Բուզանդ. *Պատմություն Հայոց*. Երևան, 1987:
4. Մովսես Խորենացի. *Հայոց պատմութիւն*. Երևան, 1981:
5. Հովհաննես Դրասխանակերտցի. *Հայոց պատմություն*. Երևան, 1996:
6. Մովսես Կաղանկատվացի. *Պատմություն Աղվանից աշխարհի*. Երևան, 1969:
7. *Կանոնագիրք հայոց*. հատոր Ա, աշխատասիրությամբ՝ Վ. Հակոբյանի, Երևան, 1964:
8. Ստեփանոս Օրբելյան. *Սյունիքի պատմությունը*. Երևան, 1986:
9. Լեո. *Երկերի ժողովածու*. հատոր 2, Երևան, 1967:
10. Սուրեն Երեմյան. *Հայաստանը ըստ Աշխարահացոյցի*. Երևան, 1963:
11. Բագրատ Ուլուբաբյան. *Դրվագներ Հայոց Արևելից կողմանց պատմության*. Երևան, 1981:
12. «Հայաստանի Հանրապետության Սահմանադրության մեկնաբանություններ». (Ընդհանուր խմբագրությամբ՝ Գ.Հարությունյանի, Ա.Վաղարշյանի) <<Իրավունք հրատ.>> Երևան, 2010:
13. Ներսես վրդ. Մելիք Թանգյան. *Հայոց եկեղեցական իրավունքը*. Ս.Էջմիածին, 2011:
14. Խաչիկ Սամուէլյան. *Հին հայ իրավոունքի պատմություն*. հատոր առաջին, Երևան, 1939:
15. Հրաչյա Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ. *Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան*. հատոր առաջին, Ա-Ե, Երևան, 1969:
16. Աշոտ Սուքիասյան. *Հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարան*. Երևան, 2009:
17. Ռուբեն Ավագյան. *Հայ իրավական մտքի գանձարան.* հ. 1, Երևան, 2001:
18. Նիկողայոս Ադոնց. *Հայաստանը Հուստինիանոսի դարաշրջանում*. Երևան, 1987:
19. *Աստոիածաշոինչ մատեան Հին եի Նոր կտակարանների*. եբրայական եի յունական բնագիրներից թարգմանուած, Շտուտգարտ, 1989-30M-063:
20. Սմբատ Հովհաննիսյան. *Աղվենի սահմանադիր ժողովի կանոնները և նրանց աղերսը Աշտիշատի կանոնների հետ*. Հայկական ՍՍՀ ԳԱ «Պատմաբանասիրական հանդես», 1967, N 14:

WORKS CITED

1. Asatur Mnacakanyan, Aghvanic ashxarhi grakanut'yan harceri shurjy' [From Agvan to World Literature Issues: Yerevan], Erevan, 1966. (in Armenian)
2. ASTOIAC'AShOINCh MATEAN HIN EI NOR KTAKARANNERI, ebrayakan ei yunakan bnagirneric t'argmanuac' [Old and New Holy Bible: Yerevan], Stuttgart, 1989-30M-063. (in Armenian)
3. Ashot Suqiasyan, Hayoc lezvi homanishneri bacatrakan bar'aran [Explanatory dictionary of synonyms of the Armenian language: Yerevan], Erevan, 2009. (in Armenian)
4. Bagrat Ulubabyan, Drvagner Hayoc Arevelic koghmanc patmut'yan [Episodes from the History of the Armenian East: Yerevan], Erevan, 1981. (in Armenian)
5. «Hayastani Hanrapetut'yan Sahmanadrut'yan meknabanut'yunner». (Y'ndhanur xmbagrut'yamb` G.Harut'yunyani, A.Vagharshyani) [Comments on the Constitution of the Republic of Armenia: Yerevan] <<Iravunq hrat.>> Erevan, 2010. (in Armenian)
6. Hovhannes Drasxanakertci, Hayoc Patmut'yun [History of Armenia: Yerevan], Erevan, 1996. (in Armenian)
7. Jhamanakakic hayoc lezvi bacatrakan bar'aran, hator ar'ajin, A-E, Erevan [Explanatory Dictionary of the Modern Armenian language: Yerevan], 1969. (in Armenian)
8. Kanonagirq hayoc, hator A, ashxatasirut'yamb` V. Hakobyani, Erevan, 1964: [Armenian Code of Laws: Yerevan] (in Armenian)
9. Leo, erkeri jhoghovac'u, hator 2 [Collection of Works: Yerevan], Erevan, 1967. (in Armenian)
10. Mat'eos Ur'hayeci, Jhamanakagrut'iun, Vagharshapat [Chronology: Vagharshapat], 1898. (in Armenian)
11. Movses Xorenaci, Hayoc patmut'iun [Armenian History: Yerevan], Erevan, 1981. (In Armenian)
12. Movses Kaghankatvaci, Patmut'yun Aghvanic ashxarhi [Agvan History: Yerevan], Erevan, 1969. (in Armenian)
13. Nerses vrd. Meliq T'angyan, Hayoc ekeghecakan iravunqy', S.E'jmiac'in [Armenian Church Law: Holy Etchmiadzin], 2011. (in Armenian)
14. Nikoghayos Adonc, Hayastany' Hustinianosi darashrjanum [Armenia in the Age of Justinian: Yerevan], Erevan, 1987. (in Armenian)
15. P'avstos Buzand Patmut'yun Hayoc [History of Armenia: Yerevan], Erevan, 1987. (in Armenian)
16. R'uben Avagyan, Hay iravakan mtqi gand'aran h. 1 [Treasury of Armenian Legal Thought: Yerevan], Erevan, 2001. (In Armenian)
17. Step'anos O'rbelyan, Syuniqi patmut'yuny' [Syunik History: Yerevan], Erevan, 1986. (in Armenian)
18. Suren Eremyan, «Hayastany' y'st Ashxarahacoyci» [Armenia according to the World Encyclopedia: Yerevan], Erevan, 1963. (in Armenian)
19. Smbat Hovhannisyan, Aghveni sahmanadir jhoghovi kanonnery' ev nranc aghersy' Ashtishati kanonneri het [The rules of the Aghven Constituent Assembly and their relationship with the rules of Ashtishat: Stuttgart], Haykakan SSH GA «Patmabanasirakan handes», 1967, N 14. (in Armenian)
20. Xachik Samue'lyan, Hin hay iravounqi patmut'yun [History of Armenian law: Yerevan], hator ar'ajin, Erevan, 1939. (in Armenian)

THE CANONS OF THE AGHVEN CONSTITUENT ASSEMBLY AND THEIR INTERRELATION WITH WITH THE CANONS OF PREVIOUS CHURCH ASSEMBLIES

VOLODYA HOVSEPYAN
National Academy of Sciences of the Republic of Armenia, Institute of Philosophy, Sociology and Law, Ph.D. Student,
Yerevan, the Republic of Armenia

The purpose of this article is to demonstrate that the study of the medieval administrative and political situation of the Eastern provinces of the Kingdom of Greater Armenia possesses not only scholarly, but also political significance. This is particularly relevant in light of the fact that Azerbaijani historiography, guided by political considerations, distorts the history of the Armenian people, thereby questioning the legitimacy of Armenian statehood. In contemporary discourse, this tendency is further reflected in official Azerbaijani claims not only to the territory of Artsakh, but also to parts of the Republic of Armenia.

The objectives of the study are as follows:

to re-examine, with new substantiations, the issues related to the dissolution of the Kingdom of Aghven (Albania), the establishment of the marzpanate, and the incorporation of the provinces of Artsakh and Utik—detached from Armenia—into Aghven;

to investigate the administrative and political status of Armenia's Eastern provinces within the Aghvank marzpanate;

to analyze the position of the local Armenian princely houses that emerged after the abolition of the Aghven marzpanate in the 9th–13th centuries.

In the course of the research, a number of specialized methods were applied, including structural, historical-legal, systemic, and analytical approaches.

The research demonstrates that following the dissolution of the Kingdom of Greater Armenia, its eastern provinces—Artsakh and Utik—while incorporated into another administrative-political entity, Aghven, nevertheless retained their Armenian character. This continuity served as the foundation for the subsequent manifestations of Armenian statehood, including the Kingdom of Hamam of the East, the principalities of Parisos and Khachen, the melikdoms of Khamsa, the Nagorno-Karabakh Autonomous Region, and, during 1991–2023, the Republic of Nagorno-Karabakh (Artsakh).

Keywords: *Agven, Artsakh, Utik, Eastern region of Armenia, church law, canon law, constitution, King Vachagan, legal source, rules of the Ashtishat and Shahapivan church councils.*

КАНОНЫ АГВЕНСКОГО УЧРЕДИТЕЛЬНОГО СОБОРА И ИХ СВЯЗЬ С КАНОНАМИ ПРЕДЫДУЩИХ ЦЕРКОВНЫХ СОБОРОВ

ВОЛОДЯ ОВСЕПЯН
соискатель Института философии, социологии и права Национальной Академии Наук Республики Армения,
г. Ереван, Республика Армения

Настоящая работа посвящена церковно-правовым канонам, принятым в одном из церковных соборов Армянской апостольской церкви (488г.) в летнем доме

Агвен, расположенном в восточном краю Армении, дошедшим до нас благодаря труду историка VII века Мовсеса Каганкатваци «История страны Алуанк» («История агван»). Документу, помещённому в главе XXVI книги, историк даёт название «Каноническая конституция царя Агванского Вачагана, утвержденная на собрании в Агвене».

В статье анализируются важные процессы и события, произошедшие в восточном краю Армении, которые послужили основой для принятия церковно-правовых канонов в Агвене. В статье автор касается проблем формирования и развития источников армянского права на востоке Армении, а также основных первоисточников, канонов, принятых на учредительном собрании в Агвене: канонов Аштишатских и Шаапиванских церковных собраний, а также их взимосвязь.

Цель настоящей статьи — показать, что изучение средневекового административно-политического положения восточных областей исторического Великого Армянского царства имеет не только научное, но и политическое значение, поскольку историография Азербайджана по политическим соображениям искажает историю армянского народа, ставя под сомнение даже сам факт существования армянской государственности. И это происходит в условиях, когда руководство Азербайджана в наши дни с дерзостью считает азербайджанскими не только территорию Арцаха, но и Армянской Республики.

Задачи исследования:

Уточнить на основе новых обоснований вопросы, связанные с упразднением царства Албании, созданием марзпанства, а также временем присоединения отторгнутых от Армении областей Арцаха и Утика к Албании.

Исследовать административно-политический статус восточных областей Армении в составе марзпанства Албании.

Изучить положение местных армянских княжеских домов, сформировавшихся после упразднения марзпанства Албании, в IX–XIII веках.

В ходе работы применялись ряд специальных методов, в частности: структурный, историко-правовой, системный, аналитический и другие.

В статье обосновано, что после упразднения Великого Армянского царства его восточные провинции — Арцах и Утик — оказавшись в составе другого административно-политического образования — Албании, остались исключительно армянскими, что стало основой для дальнейшего продолжения армянской государственности в формах царства Хамама Восточного, княжеств Парисоса и Хачена, меликств Хамсы, автономной области Нагорного Карабаха, а в 1991–2023 годах — в форме Республики Нагорный Карабах (Арцах).

Ключевые слова: *Агвен, Арцах, Утик, Восточный край Армении, церковное право, каноническое право, конституция, царь Вачаган, правовой источник, правила Аштишатского и Шаапиванского церковных соборов.*